


Համեմատական վերլուծություն

2018 և 2019 թվականների 01.01-30.04 ժամանակահատվածում արձանագրված


դեղորայքային թունավորումների վերաբերյալ

01.01-30.04.2019թ. ժամանակահատվածում ՀՀ-ում արձանագրվել է դեղորայքային թունավորման 211 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 7.1) դեպք, որից Երևան քաղաքում՝ 108 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 10), մարզերում՝ 103 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 5.4), մահվան ելքով դեպքեր չեն արձանագրվել:

ՀՀ-ում 2018 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրվել է դեղորայքային թունավորման 207 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 6.9) դեպք, որից Երևան քաղաքում՝ 93 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 8.6), մարզերում՝ 114 (հիվանդացության ցուցանիշը 100 հազ բն. հաշվարկով 6), մահվան ելքով դեպքեր չեն արձանագրվել:




Գծապատկեր. 1. ՀՀ-ում 2018 և 2019թթ.-ին արձանագրված դեղորայքային թունավորումների հիվանդացության ցուցանիշները (100.000 բն. հաշվարկով)




Գծապատկեր. 2. ՀՀ-ում 2018 և 2019թ.-ի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված դեղամիջոցներով թունավորումների հիվանդացության ցուցանիշները՝ ըստ մարզերի

Ինչպես երևում է գծապատկերից՝ 2019 թվականին Երևան քաղաքում և մի շարք մարզերում դեղորայքային թունավորումների հիվանդացության ցուցանիշները գերազանցում են միջին հանրապետական ցուցանիշը, մասնավորապես Երևան քաղաքում՝ 1.4 անգամ, Արարատի մարզում՝ 1.5 անգամ, Կոտայքի մարզում՝ 1.2 անգամ:




Գծապատկեր 3. ՀՀ-ում 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված դեղորայքային թունավորումների բաշխումը՝ ըստ պատճառների

Դեղորայքային թունավորումների պատճառների վերլուծությունը պատկերված է գծապատկեր 3-ում: Դեղորայքային թունավորման դեպքերի հիմնական մասն արձանագրվել է ինքնաբուժման (36%), ծնողի անուշադրության (37.9%) և ինքնասպանության փորձի (9.9%) պատճառով:




Գծապատկեր 4. ՀՀ-ում 2018 և 2019 թվականների հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված դեղորայքային թունավորումների բաշխումը՝ ըստ տարիքի

Գծապատկերից երևում է, որ դեղորայքային թունավորումների դեպքերից 111-ը (53.6%) արձանագրվել է երեխաների շրջանում, իսկ 96-ը (47.4%)՝ մեծահասակների շրջանում:



Գծապատկեր 5. ՀՀ-ում 2018 և 2019 թվականների հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված դեղամիջոցներով թունավորումները՝ ըստ սեռի:


Գծապատկերից երևում է, որ 2019 թվականին դեղորայքային թունավորումների դեպքերը 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կանանց շրջանում (59.2%) աճել են:




Գծապատկեր 6. ՀՀ-ում 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված դեղորայքային թունավորումների բաշխումը՝ ըստ դեղորայքի տեսակի:

Ինչպես երևում է գծապատկերից, դեղորայքային թունավորումներից առավել հաճախ հանդիպում են ցավազրկող և հոգեմետ դեղորայքով թունավորումները: Հոգեմետ դեղորայքով թունավորումների պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգեկան հիվանդներին բժշկի կողմից նշանակված դեղորայքի ընդունումը ոչ միշտ է հսկվում նրանց հարազատների կողմից, թունավորվածների մի մասն էլ հոգեմետ դեղորայք օգտագործում է ինքնաբուժման և ինքնասպանության նպատակով: Ցավազրկող դեղորայքից թունավորվելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է: Ինչպես երևում է գծապատկերից, շատ են նաև կալիումի պերմանգանատից և կարբամազեպինից թունավորման դեպքերը, որոնց հիմնական պատճառը ծնողների անուշադրությունն է և դեղորայքի փաթեթի շփոթումը այլ դեղերի հետ: Կալիումի պերմանգանատից

թունավորման դեպքերի համաճարակաբանական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ծնողները դեղորայքը պահում են երեխաներին հասանելի վայրերում, երեխաները հեշտությամբ բացում են այն և թունավորվում: Արձանագրվել են նաև կալիումի պերմանգանատից թունավորման դեպքեր, երբ ծնողները դեղի սրվակը շփոթել են վիտամին Դ-ի սրվակի հետ:



Գծապատկեր 7. ՀՀ-ում 2018 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված կալիումի պերմանգանատից թունավորումների բաշխումը՝ ըստ պատճառի:



Գծապատկեր 8. ՀՀ-ում 2019 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արձանագրված կալիումի պերմանգանատից թունավորումների բաշխումը՝ ըստ պատճառի:

Դատելով ստացված պատկերից՝ առաջարկվում է բնակչության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ ծնողների անուշադրության, բնակչության ինքնաբուժման դեպքերի կանխման ուղղությամբ, ինչպես նաև աշխատանքներ իրականացնել համապատասխան ստորաբաժանումների հետ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: